

**Կենսաբանություն, I ՓՈԻԼ  
տևողությունը 60 րոպե  
11-12-րդ դասարաններ**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

**1. Երկտուն բույս է.**

- 1) եղինջը
- 2) երեքնուկը
- 3) վարունգը
- 4) խնձորենին

**2. Մնկերն առանձին թագավորություն են կազմում, որովհետև**

- 1) Անշարժ են և ֆոտոսինթեզի ունակ չեն
- 2) Մնվում են անօրգանական նյութերով, անշարժ են, չունեն օրգաններ
- 3) Հետերոտրոֆ են, պարունակում, խիտին և բաղկացած են հիֆերից
- 4) Չունեն օրգաններ, բայց ինքնուրույն են սինթեզում օրգանական նյութեր:

**3. Տերևում ջրի մոլեկուլի վերընթաց ուղին հետևյալն է**

- 1) Հերձանցք – մեզոֆիլ - քսիլեմա
- 2) Քսիլեմա – մեզոֆիլ - հերձանցք
- 3) Ֆլոեմա – քսիլեմա - մեզոֆիլ
- 4) Ֆլոեմա – մեզոֆիլ – հերձանցք

**4. Ուղտի ընկերքը.**

- 1) դիֆուզ է
- 2) բլթակավոր է
- 3) զոնալ է
- 4) դիսկոիդալ է

**5. Հակամարմինները սինթեզվում են**

- 1) միայն մակրոֆագերում
- 2) միայն լիմֆոցիտներում
- 3) մակրոֆագերում և լիմֆոցիտներում
- 4) մակրոֆագերում և պոլիմուկլեար նեյտրալ լեյկոցիտներում

**6. Հալոբակտերիաները օգտագործում են լույսի էներգիան.**

- 1) Քլորոֆիլ a –ի օգնությամբ
- 2) Քլորոֆիլ b –ի օգնությամբ
- 3) Քլորոֆիլ a –ի և b –ի օգնությամբ
- 4) Բակտերիոռոդոպսինի օգնությամբ

**7. Խիտինը պոլիմեր է, որը բաղկացած է.**

- 1) գլյուկոզի մնացորդներից
- 2) N–ացետիլգլյուկոզամինի մնացորդներից
- 3) գալակտոզի մնացորդներից
- 4) ամինաթթվային մնացորդներից

**8. Արիտիկ գործոններ է ներառում իր մեջ այնպիսի էկոլոգիական միավոր, ինչպիսին է.**

- 1) կենսացենոզը
- 2) էկոհամակարգը
- 3) պոպուլյացիան
- 4) տեսակը

**9. Կարիոտիպը`**

- 1) օրգանիզմի հատկանիշների ամբողջությունն է
- 2) օրգանիզմի գեների ամբողջությունն է
- 3) օրգանիզմի քրոմոսոմների ամբողջությունն է
- 4) քրոմոսոմների թվաքանակն է բջջում

**10. Կալիումի ցիանիդը արգելակում է..**

- 1) ՆԱԴԻ դեհիդրոգենազին
- 2) ԱԵՖ սինթետազին
- 3) ցիտոքրոմօքսիդազին
- 4) ՌՆԹ պոլիմերազին

**11. Մարդու արյան հոսքը անոթներով չի ապահովվում.**

- 1) սրտի աշխատանքով
- 2) շնչառական շարժումներով
- 3) ճնշման տարբերությամբ անոթներում
- 4) կմաղքային մկանների կծկումներով

**12. Մեյոզ տեղի է ունենում**

- 1) Բակտերիաների սպորների առաջացման ընթացքում
- 2) Ուլտրաիքսի գոոսպորների առաջացման ընթացքում
- 3) Ֆիտոֆտորի գոոսպորների առաջացման ընթացքում
- 4) Կլավավուշի սպորների առաջացման ընթացքում

**13. Կենդանիների օրգանիզմում թթվածնի մոլեկուլը չի կապվում.**

- 1) Միոգլոբինի հետ
- 2) Հեմոգլոբինի հետ
- 3) Ցիտոքրոմ C-ի հետ
- 4) Ցիտոքրոմ a3 --ի հետ

**14. Ի՞նչ է տեղի ունենում, երբ էկոհամակարգում բացակայում են ռեդուցենտները, կամ էլ նրանց գործունեությունը թույլ է արտահայտվում:**

- 1) Ոչինչ տեղի չի ունենում
- 2) Տեղի է ունենում օրգանական նյութի կուտակում
- 3) Նվազում է պրոդուցենտների քանակը
- 4) Մեծանում է կոնսումենտների քանակը

**15. Հեռացված վահանազեղծով գորտի շերեփուկը.**

- 1) կշարունակի նորմալ մետամորֆոզը
- 2) կշարունակի մետամորֆոզը, բայց կմնա պոչով ընդմիջտ
- 3) կդադարեցնի մետամորֆոզը և կսատկի
- 4) կդադարեցնի մետամորֆոզը, բայց կշարունակի ապրել ջրում՝ դառնալով հսկա թրթուռ

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

16. Էկոլոգիական բուրգում քանի՞ տոկոս էներգիա է անցնում յուրաքանչյուր սնման մակարդակից հաջորդ սնման մակարդակ:

17. Քանի՞ շրթայակցման խումբ կա կոկոռշենու բջիջներում, եթե այդ բույսի սոմատիկ բջիջների դիպլոիդ հավաքակազմը 16-է:

18. Մարդկանց ո՞ր տոկոսն է ալբինիզմի գենի կրող, երե հայտնի է որ ալբինոս մարդկանց հանդիպելու հաճախականությունը 1/10000:

19. Քանի՞ կամբիալ օղակ կա 15-ամյա խնձորենու բնում:

20. Շունն ունի 78 քրոմոսոմ; Քանի՞ քրոմոսոմ են պարունակում նրա առաջին կարգի օօցիտները: